ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

1. **<u>Գործուղվողը, զբաղեցրած պաշտոնը՝</u>**

   Կոմիտաս Սարգսյան, ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքակա-նության և վարչարարության մեթոդաբանության վարչության ԵՏՄ մաքսային քաղաքականության և օրենսդրական կարգավորման բաժնի ավագ մասնագետ

2. **<u>Գործուղման վայրը և ժամկետները՝</u>**

   Ղազախստանի Հանրապետության, ք.Ալմաթի, 2025 թվականի մայիսի 12-ից 16-ը

3. **<u>Հրավիրող կողմը՝</u>**

   Արժույթի Միջազգային Հիմնադրամի Կովկասի, Կենտրոնական Ասիայի և Մոնղոլիայի տարածաշրջանային կարողությունների զարգացման կենտրոն

4. **<u>Գործուղման նպատակը՝</u>**

   Մասնակցություն «Strengthening Public Investment Management Practicess/ Պետական ներդրումների կառավարման ամրապնդում» թեմայով դասընթացին:

5. **<u>Քննարկված թեմաները՝</u>**

   Դասընթացին մասնկացում էին նաև Վրաստանի, Ադրբեջանի, Ղազախստանի, Ուզբեկստանի, Ղրղզստանի, Տաջիկստանի, Թուրքմենստանի, Մոնղոլիայի պետական կառավարման մարմինների ներկայացուցիչներ: Դասընթացի ընթացքում քննարկվել են մասնակից երկրներում հանրային ներդրումների կառավարման ոլորտում իրականացվող միջոցառումները, առկա մարտահրավերներն ու դրանց հաղթահարման համար ուղղվող աշխատանքները, ծրագրերի ընտրության վերաբերյալ որոշումների իրազեկման արդյունավետ մոտեցումները՝ բյուջետային գործընթացի համատեքստում, ինչպես նաև կառավարման արդյունավետության բարձրացման համար տեղեկատվական համակարգերի ինտեգրման հետ կապված խնդիրները:

6. **<u>Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝</u>**

Դասընթացի ընթացքում ներկայացվել է զեկույց «Strategies and tools to strengthen Public Investment in Armenia/ «Հայաստանում հանրային ներդրումները ամրապնդելու ռազմավարություններ և գործիքներ» թեմայի շուրջ, մանրամասն ներկայացնելով Հայաստանում հանրային ներդրումների կառավարման համակարգի ընթացակարգերը, հանրային ներդրումային ծրագրերի իրականացման գործում կատարվող բարեփոխումները:

7. **Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝**

Կազմակերպիչների կողմից ընդգծվել է կարևորությունը՝ նմանատիպ դասընթացների շարունակականության ապահովման և մասնակիցների կողմից ձեռք բերված գիտելիքների գործնականում կիրառման:

8. **Ստորագրությունը, ամսաթիվը՝**

19 մայիսի, 2025թ.